ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19-20-13

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

31 հոկտեմբերի 2019թ. ք. Երևան

Նախագահությամբ՝ Ռ. Սինոյանի
Փոխնախագահ՝ Ա. Ազարյան
անդամներ՝ Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Վ. Բերակչյան
Տ. Իսրաելյան
Բ. Ղալոյան

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 23/10/19թ. «Փյունիկ-2»-«Լոկոմոտիվ» (ԱԽ107) խաղին «Լոկոմոտիվ» թիմի գլխ.մարզչի օգն. Վոլոդիմիր Գավրիլովի (N 33580) հեռացման մասին (հայհոյանք մրցավարի հասցեին) /զեկուցող Հ. Ռշտունի/

2. 27/10/19թ. «Արարատ»-«Փյունիկ» (ԲԽ057) խաղին «Փյունիկ» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Վարդանյանի (N 11837) հեռացման մասին (մրցավարին հայհոյելու և հրելու, մարզադաշտը լքելիս հանդերձարան տանող ճանապարհի դռանը հարվածելու և կոտրելու, անվայել վարքագծի ու ոչ մարզական պահվածքի համար)

3. 26/10/19թ. «Լոռի ՖԱ»-«Գանձասար-Կապան» (ԲԽ059) խաղի մասին (Առաջին խաղակեսի ավարտից հետո թիմերը գնում էին հանդերձարան՝ անցնելով խաղադաշտին կից գտնվող բնական ծածկով խաղադաշտով: «Լոռի» թիմի խաղացողներն արդեն անցել էին այդ խաղադաշտով, երբ Պատվավոր հյուրերի օթյակից ինչ-որ մեկը անհարգալից տոնով «Գանձասար-Կապան» թիմի խաղացողներին ասաց, որ չանցնեն խաղադաշտով: Դրանից հետո խաղացողներից եղավ պատասխան և սկսվեց վիճաբանություն, որը տևեց մոտ 5 րոպե: Կրքերը հանդարտեցնելու, ինչպես նաև անվտանգության նկատառումներով, խաղակեսերի միջև ընդմիջումը տևեց 32 րոպե: Երկրորդ խաղակեսի ընթացքում և խաղից հետո այլ միջադեպեր չեն եղել:) /զեկուցող Հ. Ռշտունի/

4. 26/10/19թ. «Լոռի ՖԱ»-«Գանձասար-Կապան» (ԲԽ059) խաղի մասին (Առաջին խաղակեսի ավարտից հետո թիմերը գնում էին հանդերձարան՝ անցնելով խաղադաշտին կից գտնվող բնական ծածկով խաղադաշտով: «Լոռի» թիմի խաղացողներն արդեն անցել էին այդ խաղադաշտով, երբ Պատվավոր հյուրերի օթյակից ինչ-որ մեկը անհարգալից տոնով «Գանձասար-Կապան» թիմի խաղացողներին ասաց, որ չանցնեն խաղադաշտով: Դրանից հետո խաղացողներից եղավ պատասխան և սկսվեց վիճաբանություն, որը տևեց մոտ 5 րոպե: Կրքերը հանդարտեցնելու, ինչպես նաև անվտանգության նկատառումներով, խաղակեսերի միջև ընդմիջումը տևեց 32 րոպե: Երկրորդ խաղակեսի ընթացքում և խաղից հետո այլ միջադեպեր չեն եղել:) /զեկուցող Հ. Ռշտունի/

5. 29/10/19թ. «Արարատ-2»-«Փյունիկ-2» (ԱԽ111) խաղի մասին (Գնդակ մատակարարող երեխաների մարզիչը նախախաղային խորհրդակցությանը չի մասնակցել:) /զեկուցող Հ. Ռշտունի/

6. 29/10/19թ. «Արարատ-2»-«Փյունիկ-2» (ԱԽ111) խաղի մասին («Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների մարզաշապիկների հետնամասում բացակայում էին ազգանունները) /զեկուցող Հ. Ռշտունի/

7. 28/10/19թ. «Լոկոմոտիվ»-«Լեռնային Արցախ» (ԱԽ110) խաղի մասին (Չկար մրցավարի էլեկտրոնային լուսատախտակը) /զեկուցող Հ. Ռշտունի/

8. 29/10/19թ. «Արագած»-«Շիրակ-2» (ԱԽ112) խաղի մասին (Չկար մրցավարի էլեկտրոնային լուսատախտակը) /զեկուցող Հ. Ռշտունի/

9. 30/10/19թ. «ԲԿՄԱ»-«Սևան» (ԱԽ113) խաղի մասին (Հավատագրման գործընթացը պատշաճ չկիրառելու համար) /զեկուցող Հ. Ռշտունի/

10. 30/10/19թ. «ԲԿՄԱ»-«Սևան» (ԱԽ113) խաղի մասին (որակազրկված պաշտոնյա տեխնիկական գոտում գտնվելու համար) /զեկուցող Հ. Ռշտունի/

11. 30/10/19թ. «Տորպեդո»-«Մասիս» (ԱԽ115) խաղի մասին (Նախախաղային խորհրդակցությանը «Մասիս» թիմի ներկայացուցիչը չի մասնակցել) /զեկուցող Հ. Ռշտունի/

12. 28/10/19թ. «Ալաշկերտ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ117) խաղի մասին (նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցիչը ներկայացավ 40 րոպե ուշացումով) /զեկուցող Հ. Ռշտունի/

13. 25/10/19թ. «ՖԱ Երևան»-«Շիրակ» (ԲԽ056) խաղի մասին («ՖԱ Երևան» թիմի ներկայացուցիչը ուշացումով ներկայացավ նախախաղային խորհրդակցությանը) /զեկուցող Հ. Ռշտունի/

14. 25/10/19թ. «ՖԱ Երևան»-«Շիրակ» (ԲԽ056) խաղի մասին (Տոմսային համակարգը չի կիրառվել) /զեկուցող Հ. Ռշտունի/

15. 27/10/19թ. «Արարատ»-«Փյունիկ» (ԲԽ057) խաղի մասին (նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցիչը չի մասնակցել) /զեկուցող Հ. Ռշտունի/

16. 27/10/19թ. «Արարատ»-«Փյունիկ» (ԲԽ057) խաղի մասին (Կարգուկանոն չի ապահովվել) /զեկուցող Հ. Ռշտունի/

17. 25/10/19թ. «Ուրարտու»-«Ալաշկերտ» (ԲԽ058) խաղի մասին (տեսախցիկների և գովազդային պաստառների դիրքերը սխալ էր, լուծված չէր 16մ տեսախցիկներից մեկի հարթակի հարցը) /զեկուցող Հ. Ռշտունի/

18. 24/10/19թ. «ՎՖԴ-07»-«Արարատ-Արմենիա-07» (13Մ1-016) խաղին «ՎՖԴ-07» թիմի ֆուտբոլիստ Վահագն Մամբրեյանի (N 35361) հեռացման մասին (կանոնների լուրջ կոպիտ խախտում) /զեկուցող Հ. Ռշտունի/

19. 26/10/19թ. «Աղբյուրակ-03»-«Ակադեմիա-03» (17Գ-002) խաղին «Ակադեմիա-03» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Հակոբյանի (N 24529) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար) /զեկուցող Հ. Ռշտունի/

20. 28/10/19թ. «Սիսիան-06»-«Փյունիկ-2-06» (14Գ-006) խաղին «Սիսիան-06» թիմի ֆուտբոլիստ Վահագն Թանգյանի (N 36004) հեռացման մասին (նույն խաղում 2 դեղին ստանալու) /զեկուցող Հ. Ռշտունի/

21. 24/10/19թ. «Թխաձոր-07»-«Դովեղ-07» (13Մ4-016) խաղի մասին («Դովեղ-07» թիմի ներկայացուցիչը նախախաղային խորհրդակցությանը չի մասնակցել) /զեկուցող Հ. Ռշտունի/

22. 24/10/19թ. «Նոա-07»-«Տորպեդո-07» (13Մ3-014) խաղի մասին (Խաղը սկսվել է 20 րոպե ուշ բժշկի և թիմի ադմինիստրատորի քարտի բացակայության պատճառով:) /զեկուցող Հ. Ռշտունի/

23. 26/10/19թ. «Եղվարդ»-«Սիրիուս» (ՖՁ005) խաղին «Եղվարդ» թիմի ֆուտբոլիստ Բաբկեն Բեգլարյանի (N 1180) հեռացման մասին (Մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու) /զեկուցող Հ. Ռշտունի/

24. 27/10/19թ. «Արարատ-Արմենիա-ՖՁ»-«Արարատ-ՖՁ» (ՖՁ006) խաղի մասին («Արարատ-ՖՁ» թիմի բժշկի ուշացման պատճառով խաղը սկսվել է 25 րոպե ուշացումով: ) /զեկուցող Հ. Ռշտունի/

25. 26/10/19թ. «Սևան-աղջիկներ»-«Լոկոմոտիվ-աղջիկներ» (ԿՄԲ012) խաղի մասին (Սևան-աղջիկներ թիմը հանդիպմանը չի ներկայացել, ֆուտբոլիստուհիների չգրանցվելու և չհայտավորվելու պատճառով) /զեկուցող Հ. Ռշտունի/

**1. 23/10/19թ. «Փյունիկ-2»-«Լոկոմոտիվ» (ԱԽ107) խաղին «Լոկոմոտիվ» թիմի գլխ.մարզչի օգն. Վոլոդիմիր Գավրիլովի (N 33580) հեռացման մասին (հայհոյանք մրցավարի հասցեին)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
1. 23/10/19թ. «Փյունիկ-2»-«Լոկոմոտիվ» (ԱԽ107) խաղին «Լոկոմոտիվ» թիմի գլխ.մարզչի օգն. Վոլոդիմիր Գավրիլովի (N 33580) հեռացման (հայհոյանք մրցավարի հասցեին) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն՝«Լոկոմոտիվ» թիմի գլխ.մարզչի օգն. Վոլոդիմիր Գավրիլովին որակազրկել մինչև ս.թ. դեկտեմբերի 31-ը, «Լոկոմոտիվ» ֆուտբոլային ակումբին տուգանել 200000 ՀՀ դրամ

**2. 27/10/19թ. «Արարատ»-«Փյունիկ» (ԲԽ057) խաղին «Փյունիկ» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Վարդանյանի (N 11837) հեռացման մասին (մրցավարին հայհոյելու և հրելու, մարզադաշտը լքելիս հանդերձարան տանող ճանապարհի դռանը հարվածելու և կոտրելու, անվայել վարքագծի ու ոչ մարզական պահվածքի համար)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
2. 27/10/19թ. «Արարատ»-«Փյունիկ» (ԲԽ057) խաղին «Փյունիկ» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Վարդանյանի (N 11837) հեռացման մասին.
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018/19 մրցաշրջանում ֆուտբոլիստ Էրիկ Վարդանյանը որակազրկվել էր 5 խաղով, որից 3-ը մարվել էր 2018/19 մրցաշրջանում, իսկ մնացած 2 խաղ որակազրկումը տեղափոխվել էր հաջորդ՝ 2019/20 մրցաշրջան, որը, սակայն, կասեցվել էր և ֆուտբոլիստը մինչև վերջ չէր կրել համապատասխան որակազրկումը:

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի՝

- 31-րդ հոդվածի 24-րդ կետի համաձայն.
  (Խաղի ժամանակահատվածում ֆուտբոլիստների և պաշտոնատար անձանց անպարկեշտ, անվայել վարքագծի ու ոչ մարզական պահվածքի դեպքում, առաջացնում է նկատողություն, որակազրկում մինչև 5 խաղ, և առաջացնում է

տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հինգհարյուրապատիկի ՀՀ դրամի չափով),

- 31-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն.
  (Խաղը սպասարկող անձնակազմի կամ դրա որևէ անդամի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու (ինչպես նաև հայհոյելու), հարվածելու, հարվածելու փորձ կատարելու դեպքում, պաշտոնատար անձինք զրկվում են իրենց ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից մինչև 1 տարի ժամկետով իսկ ֆուտբոլիստ/ները որակազրկվում են մինչև 1 տարի ժամկետով և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հինգհարյուրապատիկ ՀՀ դրամի չափով),
- 32-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն.
  (Խաղընկերոջ, մրցակցի, պաշտոնական անձանց և հանդիսատեսների հասցեին կամ անհասցե վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ թույլ տալը, առաջացնում է թիմի պաշտոնյայի կամ ֆուտբոլիստի որակազրկում մինչև 10 խաղով, և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի ՀՀ դրամի չափով):

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի վերոնշյալ հոդվածների համաձայն, ֆուտբոլիստ Էրիկ Վարդանյանին որակազրկել 6 ամսով մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը, Փյունիկ Ֆուտբոլային Ակումբ Հասարակական Կազմակերպություն ակումբին տուգանել 600000 ՀՀ դրամ

**3. 26/10/19թ. «Լոռի ՖԱ»-«Գանձասար-Կապան» (ԲԽ059) խաղի մասին (Առաջին խաղակեսի ավարտից հետո թիմերը գնում էին հանդերձարան՝ անցնելով խաղադաշտին կից գտնվող բնական ծածկով խաղադաշտով: «Լոռի» թիմի խաղացողներն արդեն անցել էին այդ խաղադաշտով, երբ Պատվավոր հյուրերի օթյակից ինչ-որ մեկն անհարգալից տոնով «Գանձասար-Կապան» թիմի խաղացողներին ասաց, որ չանցնեն խաղադաշտով: Դրանից հետո խաղացողներից եղավ պատասխան և սկսվեց վիճաբանություն, որը տևեց մոտ 5 րոպե: Կրքերը հանդարտեցնելու, ինչպես նաև անվտանգության նկատառումներից ելնելով, խաղակեսերի միջև ընդմիջումը տևեց 32 րոպե: Երկրորդ խաղակեսի ընթացքում և խաղից հետո այլ միջադեպեր չեն եղել:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

3. 26/10/19թ. «Լոռի ՖԱ»-«Գանձասար-Կապան» (ԲԽ059) խաղին (Հանդիպման ժամանակահատվածում ակումբի պաշտոնատար անձանց, և/կամ ֆուտբոլիստների այնպիսի գործողությունների դեպքում, որոնք մարզադաշտում և շրջակա տարածքում առաջացրել են անկարգություններ, բայց խաղի մեկնարկի, շարունակության և/կամ արդյունքի վրա ազդեցություն չեն թողել, դաշտի տեր թիմի կողմից խաղի ժամանակահատվածում կարգուկանոն չապահովելու, խաղը ուշացումով վերսկսելու) համար:

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի՝

- 31-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն.
  (Սույն հոդվածի 10-րդ կետում նշված գործողությունների դեպքում, որը/որոնք մարզադաշտում և դրա շրջակա տարածքում առաջացրել են անկարգություններ, բայց խաղի մեկնարկի, շարունակության, և/ կամ արդյունքի վրա ազդեցություն չեն թողել, առաջացնում է խախտում թույլ տված պաշտոնատար անձանց զրկում իրենց ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից մինչև 10 խաղով, տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (50,000 մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով, և խախտում թույլ տված ֆուտբոլիստների որակազրկում մինչև 10 խաղով),
- 31-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն.
  (Դաշտի տեր թիմի կողմից խաղի ժամանակահատվածում մարզադաշտում կարգուկանոն չապահովելու, հանդիսականների կողմից մրցավարների,

պատվիրակի, տեսուչի, ֆուտբոլիստների և պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ, անհարգալից արարքներ թույլ տալը, առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև երկուհարյուրհիսունապատիկի (250,000 ՀՀ դրամ) չափով, և/կամ մարզադաշտի որակազրկում տվյալ թիմի համար մինչև 3 խաղ, կամ մինչև 3 խաղ անցկացնում է առանց հանդիսատեսի)

- 31-րդ հոդվածի 29-րդ կետի համաձայն.
  (Խաղն ուշացումով սկսելը առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ մինչև նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկ ՀՀ դրամի չափով:)

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի վերոնշյալ հոդվածների համաձայն՝ «Լոռի ՖԱ» թիմը հաջորդ 1 տնային հանդիպումն անցկացնել առանց հանդիսատեսի և Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ-ին տուգանել 500000 ՀՀ դրամ: Ընդ որում, հաշվի առնելով այն, որ անկարգությունները և հայհոյանքների տարափը եղել էր անմիջապես Պատվավոր հյուրերի օթյակից, ապահովել մարզադաշտի վերոնշյալ օթյակում բացառապես Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ-ի այն պաշտոնատար անձանց ներկայությունը, ովքեր գրանցված են ՀՖՖ տեխնիկական բազայում, միաժամանակ պաշտոնյաների ցուցակն ուղարկել հաստատման ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժին խաղից 2 օր առաջ:

**4. 26/10/19թ. «Լոռի ՖԱ»-«Գանձասար-Կապան» (ԲԽ059) խաղի մասին (Առաջին խաղակեսի ավարտից հետո թիմերը գնում էին հանդերձարան՝ անցնելով խաղադաշտին կից գտնվող բնական ծածկով խաղադաշտով: «Լոռի» թիմի խաղացողներն արդեն անցել էին այդ խաղադաշտով, երբ Պատվավոր հյուրերի օթյակից ինչ-որ մեկը անհարգալից տոնով, «Գանձասար-Կապան» թիմի խաղացողներին ասաց, որ չանցնեն խաղադաշտով: Դրանից հետո խաղացողներից եղավ պատասխան և սկսվեց վիճաբանություն, որը տևեց մոտ 5 րոպե: Կրքերը հանդարտեցնելու, ինչպես նաև անվտանգության նկատառումներով, խաղակեսերի միջև ընդմիջումը տևեց 32 րոպե: Երկրորդ խաղակեսի ընթացքում և խաղից հետո այլ միջադեպեր չեն եղել:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

4. 26/10/19թ. «Լոռի ՖԱ»-«Գանձասար-Կապան» (ԲԽ059) խաղին (Խաղն ուշացումով վերսկսելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 29-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 ՀՀ դրամ

**5. 29/10/19թ. «Արարատ-2»-«Փյունիկ-2» (ԱԽ111) խաղի մասին (Գնդակ մատակարարող երեխաների մարզիչը նախախաղային խորհրդակցությանը չի մասնակցել):**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

5. 29/10/19թ. «Արարատ-2»-«Փյունիկ-2» (ԱԽ111) խաղին (Գնդակ մատակարարող երեխաների մարզիչը նախախաղային խորհրդակցությանը չմասնակցելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 28-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբ ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամ

**6. 29/10/19թ. «Արարատ-2»-«Փյունիկ-2» (ԱԽ111) խաղի մասին («Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների մարզաշապիկների հետնամասում բացակայում էին ազգանունները)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

6. 29/10/19թ. «Արարատ-2»-«Փյունիկ-2» (ԱԽ111) խաղին («Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների մարզաշապիկների ետնամասում ազգանունները բացակայելու) համար, ՀՖՖ

կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամ

**7. 28/10/19թ. «Լոկոմոտիվ»-«Լեռնային Արցախ» (ԱԽ110) խաղի մասին (Չկար մրցավարի էլեկտրոնային լուսատախտակը)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
7. 28/10/19թ. «Լոկոմոտիվ»-«Լեռնային Արցախ» (ԱԽ110) խաղին (Մրցավարի էլեկտրոնային լուսատախտակի չլինելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ Լեռնային Արցախ ՖԱ ՍՊԸ ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամ

**8. 29/10/19թ. «Արագած»-«Շիրակ-2» (ԱԽ112) խաղի մասին (Չկար մրցավարի էլեկտրոնային լուսատախտակը)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
8. 29/10/19թ. «Արագած»-«Շիրակ-2» (ԱԽ112) խաղին (Մրցավարի էլեկտրոնային լուսատախտակի չլինելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Արագած» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամ

**9. 30/10/19թ. «ԲԿՄԱ»-«Սևան» (ԱԽ113) խաղի մասին (Հավատագրման գործընթացը պատշաճ չկիրառելու համար)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
9. 30/10/19թ. «ԲԿՄԱ»-«Սևան» (ԱԽ113) խաղին (Հավատագրման գործընթացը պատշաճ չկիրառելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամ

**10. 30/10/19թ. «ԲԿՄԱ»-«Սևան» (ԱԽ113) խաղի մասին (որակազրկված պաշտոնյա տեխնիկական գոտում գտնվելու համար)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
10. 30/10/19թ. «ԲԿՄԱ»-«Սևան» (ԱԽ113) խաղին (որակազրկված պաշտոնյա տեխնիկական գոտում գտնվելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Սևան Ֆուտբոլային Ակումբ» ՍՊԸ ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամ

**11. 30/10/19թ. «Տորպեդո»-«Մասիս» (ԱԽ115) խաղի մասին (Նախախաղային խորհրդակցությանը «Մասիս» թիմի ներկայացուցիչը չի մասնակցել)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
11. 30/10/19թ. «Տորպեդո»-«Մասիս» (ԱԽ115) խաղին (Նախախաղային խորհրդակցությանը «Մասիս» թիմի ներկայացուցչի չմասնակցելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 28-րդ կետի համաձայն՝ «Մասիս» ՖԱ ՍՊԸ-ին տուգանել 20000 ՀՀ դրամ

**12. 28/10/19թ. «Ալաշկերտ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ117) խաղի մասին (նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցիչը ներկայացավ 40 րոպե ուշացումով)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
12. 28/10/19թ. «Ալաշկերտ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ117) խաղին (նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցչի ուշացման) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 28-րդ կետի համաձայն՝ «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամ

**13. 25/10/19թ. «ՖԱ Երևան»-«Շիրակ» (ԲԽ056) խաղին (նախախաղային խորհրդակցությանը «ՖԱ Երևան» թիմի ներկայացուցիչը ներկայացավ ուշացումով) մասին**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
13. 25/10/19թ. «ՖԱ Երևան»-«Շիրակ» (ԲԽ056) խաղին (նախախաղային խորհրդակցությանը «ՖԱ Երևան» թիմի ներկայացուցչի ուշացման) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 28-րդ կետի համաձայն՝ «ՖԱ Երևան»-ին տուգանել 20000 ՀՀ դրամ

**14. 25/10/19թ. «ՖԱ Երևան»-«Շիրակ» (ԲԽ056) խաղի մասին (Տոմսային համակարգը չի կիրառվել)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
14. 25/10/19թ. «ՖԱ Երևան»-«Շիրակ» (ԲԽ056) խաղին (Տոմսային համակարգի չգործելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «ՖԱ Երևան»-ին տուգանել 20000 ՀՀ դրամ

**15. 27/10/19թ. «Արարատ»-«Փյունիկ» (ԲԽ057) խաղի մասին (նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցիչը չի մասնակցել)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
15. 27/10/19թ. «Արարատ»-«Փյունիկ» (ԲԽ057) խաղին (նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցչի չմասնակցելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 28-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 ՀՀ դրամ

**16. 27/10/19թ. «Արարատ»-«Փյունիկ» (ԲԽ057) խաղի մասին (Կարգուկանոն չի ապահովվել)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
16. 27/10/19թ. «Արարատ»-«Փյունիկ» (ԲԽ057) խաղին (Կարգուկանոն չապահովելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 200000 ՀՀ դրամ

**17. 25/10/19թ. «Ուրարտու»-«Ալաշկերտ» (ԲԽ058) խաղի մասին (տեսախցիկների և գովազդային պաստառների դիրքերը սխալ էր, լուծված չէր 16մ տեսախցիկներից մեկի հարթակի հարցը) /զեկուցող Հ. Ռշտունի/**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
17. 25/10/19թ. «ՌԻրարտու»-«Ալաշկերտ» (ԲԽ058) խաղին (տեսախցիկների և գովազդային պաստառների սխալ լինելու, 16մ տեսախցիկի հարթակը չապահովելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ ՖԱ «Ուրարտու» ՄՀԿ ակումբին տուգանել 50000 ՀՀ դրամ

**18. 24/10/19թ. «ՎՖԴ-07»-«Արարատ-Արմենիա-07» (13Մ1-016) խաղին «ՎՖԴ-07» թիմի ֆուտբոլիստ Վահագն Մամբրեյանի (N 35361) հեռացման մասին (կանոնների լուրջ կոպիտ խախտում)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
18. 24/10/19թ. «ՎՖԴ-07»-«Արարատ-Արմենիա-07» (13Մ1-016) խաղին «ՎՖԴ-07» թիմի ֆուտբոլիստ Վահագն Մամբրեյանի (N 35361) հեռացման (կանոնների լուրջ կոպիտ խախտում) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 35-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Վահագն Մամբրեյանին որակազրկել 2 խաղով, Վանաձորի ֆուտբոլի մասն. մ/պ մ/դպ ակումբին տուգանել 4000 ՀՀ դրամ

**19. 26/10/19թ. «Աղբյուրակ-03»-«Ակադեմիա-03» (17Գ-002) խաղին «Ակադեմիա-03» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Հակոբյանի (N 24529) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
19. 26/10/19թ. «Աղբյուրակ-03»-«Ակադեմիա-03» (17Գ-002) խաղին «Ակադեմիա-03» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Հակոբյանի (N 24529) հեռացման (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 35-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիա ակումբին տուգանել 2000 ՀՀ դրամ

**20. 28/10/19թ. «Սիսիան-06»-«Փյունիկ-2-06» (14Գ-006) խաղին «Սիսիան-06» թիմի ֆուտբոլիստ Վահագն Թանգյանի (N 36004) հեռացման մասին (նույն խաղում 2 դեղին ստանալու)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
20. 28/10/19թ. «Սիսիան-06»-«Փյունիկ-2-06» (14Գ-006) խաղին «Սիսիան-06» թիմի ֆուտբոլիստ Վահագն Թանգյանի (N 36004) հեռացման (նույն խաղում 2 դեղին ստանալու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 35-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Սիսիանի ֆուտբոլի դպրոց ակումբին տուգանել 3000 դրամ

**21. 24/10/19թ. «Թխաձոր-07»-«Դովեղ-07» (13Մ4-016) խաղի մասին («Դովեղ-07» թիմի ներկայացուցիչը նախախաղային խորհրդակցությանը չի մասնակցել)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
21. 24/10/19թ. «Թխաձոր-07»-«Դովեղ-07» (13Մ4-016) խաղին («Դովեղ-07» թիմի ներկայացուցչի նախախաղային խորհրդակցությանը չմասնակցելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ Դովեղ ՖԱ ՀԿ ակումբին տուգանել 2000 ՀՀ դրամ

**22. 24/10/19թ. «Նոա-07»-«Տորպեդո-07» (13Մ3-014) խաղի մասին (Խաղը սկսվել է 20 րոպե ուշ բժշկի և թիմի ադմինիստրատորի քարտի բացակայության պատճառով:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
22. 24/10/19թ. «Նոա-07»-«Տորպեդո-07» (13Մ3-014) խաղին (Խաղն ուշ սկսվելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն՝ «Նոա» ՖԱ ՀԿ-ին տուգանել 3000 ՀՀ դրամ

**23. 26/10/19թ. «Եղվարդ»-«Սիրիուս» (ՖՁ005) խաղին «Եղվարդ» թիմի ֆուտբոլիստ Բաբկեն Բեգլարյանի (N 1180) հեռացման մասին (Մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
23. 26/10/19թ. «Եղվարդ»-«Սիրիուս» (ՖՁ005) խաղին «Եղվարդ» թիմի ֆուտբոլիստ Բաբկեն Բեգլարյանի (N 1180) հեռացման (Մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 39-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Բաբկեն Բեգլարյանին որակազրկել 1 խաղով, Եղվարդի համայնքապետարան ակումբին տուգանել 10000 դրամ

**24. 27/10/19թ. «Արարատ-Արմենիա-ՖՁ»-«Արարատ-ՖՁ» (ՖՁ006) խաղի մասին («Արարատ-Արմենիա-ՖՁ» թիմի բժշկի ուշացման պատճառով խաղը սկսվել է 25 րոպե ուշացումով:)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
24. 27/10/19թ. «Արարատ-Արմենիա-ՖՁ»-«Արարատ-ՖՁ» (ՖՁ006) խաղին (Խաղը ուշ սկսվելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 38-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբ ակումբին տուգանել 10000 դրամ

**25. 26/10/19թ. «Սևան-աղջիկներ»-«Լոկոմոտիվ-աղջիկներ» (ԿՄԲ012) խաղի մասին («Սևան-աղջիկներ» թիմը հանդիպմանը չի ներկայացել, ֆուտբոլիստուհիների չգրանցվելու և չհայտավորվելու պատճառով)**

ՈՐՈՇԵՑԻՆ՝
25. 26/10/19թ. «Սևան-աղջիկներ»-«Լոկոմոտիվ-աղջիկներ» (ԿՄԲ012) խաղի մասին («Սևան-աղջիկներ» թիմը հանդիպմանը չներկայանալու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 36-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝մրցաշրջանում թիմի երկու հանդիպման անհարգելի պատճառով չներկայանալու համար, «Սևան-աղջիկներ» թիմին հանել առաջնությունից, «Սևան» ՖԱ-ին տուգանել 30000 ՀՀ դրամ

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝
ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.
Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: